ՓԱՍՏԱԲԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼԸ ՄԵՐԺՎԵԼ Է

22.03.2017 17:40

ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ ազգային անվտանգության մարմիններում քննվող, թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված և կիբեռհանցագործությունների գործերով վարչության պետը 06.03.2017թ. դիմել է ՀՀ փաստաբանների պալատին՝ փաստաբան **Հարություն Բաղդասարյանի** (արտոնագիր թիվ 707) նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հարցը քննարկելու համար:

Դիմումի հիմքում դրվել է ***«Մարտ ամսվա ընթացքում ձայն կհանեն Ջենով Օհանը և Քեռի Թորոսը. «Սասնա ծռերն» ուղերձ են հղում»*** վերտառությամբ www.hraparak.am համացանցային կայքի հրապարակումը: Դատախազությունը գտել է, որ փաստաբանը դուրս գալով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով սահմանված փաստաբանական գործունեության շրջանակներից՝ փաստաբանական գործունեությանը չվերաբերող հարցերով իր վստահորդների հայացքներն է փոխանցել զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներին, ավելին' որոշակի ձևակերպումներով տեղեկություններ է հայտնել մարտ ամսվա ընթացքում սպասվող իրադարձությունների և դրանց մասին իր իրազեկվածության մասին:

Փաստաբան Հարություն Բաղդասարյանը ՀՀ փաստաբանների պալատին 14.03.2017թ. ներկայացված գրավոր դիրքորոշմամբ տեղեկացրել է, որ վերը հիշատակված հոդվածը վերաբերում է իր պաշտպանյալ Պավել Մանուկյանի քաղաքական գործունեությանը, դրանում արծարծված են նրա քաղաքական հայացքները, և ինքը՝ որպես Պ.Մանուկյանի պաշտպան, տարածելով իր պաշտպանյալի գաղափարները, լրագրողին հայտնել է, որ Սասնա ծռերը մարտ ամսին քաղաքական հայտարարություններ են անելու:

ՀՀ փաստաբանների պալատի նախագահը՝ ՀՀ գլխավոր դատախազության դիմումի և փաստաբան Հարություն Բաղդասարյանի գրավոր դիրքորոշման քննարկման արդյունքում **22.03.2017թ. №69-Ա որոշմամբ** փաստաբան Հարություն Բաղդասարյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելը մերժվել է՝ կարգապահական վարույթ հարուցելու հիմքի բացակայության պատճառաբանությամբ:

Բեռնել ՀՀ ՓՊ նախագահի 22.03.2017թ. № 69-Ա որոշումը

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
աշխատակազմ

Առաջարկվող նորություններ

26.10.2013ԱՐՏԱԿԱՐԳ ՈՒՂԵՐՁ. ԲՈԼՈՐ ՆՐԱՆՑ, ՈՎՔԵՐ ՏՈՒԺԵԼ ԵՆ ՀՀ ԴԱՏԱՀԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՊՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ, ԲԱՅՑ ՉԵՆ ՁՐԿՎԵԼ ՊԱՏՎԱԽՆԴՐՈՒԹՅՈՒՆԻՑ

26.01.2017ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱՁ ԿՈՐՅՈՒՆ ՆԵՐՍԻՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԵԼ Է ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })